



«Ապահովագրական ընկերությունների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման հրահանգը» Հավելվածի

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ՁԵՎ 5)**

*Ժամանակաշրջան – 2016 թվական երկրորդ եռամսյակ*

*30 Հունիս 2016 թ.*

**Ծանոթագրություն 1. Կորպորատիվ տեղեկատվություն**

«ՌԵՍՈ» ապահովագրական ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է հիմնադիրների (բաժնետերերի) ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 22 նոյեմբերի 2008 թ. կնքված հիմնադիր պայմանագրի: Ընկերությունը տրամադրում է ապահովագրական ոլորտի ծառայությունների լայն ընտրանի և գործում է Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում, Կոմիտասի պող. 62 շ., 93-93/1 հասցեում: Ընկերության ինտերնետային կայքի հասցեն է՝ [www.Reso.am](http://www.Reso.am) :

Ընկերության կանոնադրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում է 1 870 000 (մեկ միլիարդ ութ հարյուր յոթանասուն միլիոն): Ընկերության բաժնետերերն են հանդիսանում՝ «Սի Այ Էս Իքուիթի Փարթներս Լիմիթեդ» ՍՊ և «Պոլիգրաֆիա» ՓԲ (նախկին բաժնետեր «ԷՍՋԻԱՅ-Ինվեստ» ՍՊԸ իրավահաջորդ) ընկերությունները՝ յուրաքանչյուրը 50 % բաժնեմասով:

Ընկերությունը 10.11.2008 թ-ին ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել է ոչ կյանքի ապահովագրության հինգ ապահովագրական դասերով գործունեության իրականացման թիվ ԱՊՈ 0010 լիցենզիա: Հետագայում 25.08.2009 թ-ին ավելացվել է ևս հինգ ապահովագրական դաս: Ներկայումս Ընկերությունը իրականացնում է ապահովագրական գործունեություն հետևյալ ապահովագրական դասերի գծով՝

- ✓ Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն,
- ✓ Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն,
- ✓ Դժբախտ պատահարներից ապահովագրություն,
- ✓ Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն,
- ✓ Գույքին հասցված այլ վնասների ապահովագրություն,
- ✓ Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն,
- ✓ Ֆինանսական վնասի ապահովագրություն,
- ✓ Առողջության ապահովագրություն,
- ✓ Աջակցության ապահովագրություն:

Ընկերությունը 17.12.1012թ. ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ստացել է ոչ կյանքի վերաապահովագրության գործունեության իրականացման թիվ ԱՊԿ 0003 լիցենզիա:

2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերության աշխատակիցների թիվը կազմել է 101 աշխատակից:

2016 թվականի հունիսի 30-ի դրությամբ Ընկերության գործակալների թիվը կազմել է 181՝ որից ֆիզիկական անձ գործակալների թիվը կազմում է 43:

**Ծանոթագրություն 2. Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքեր**

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների: Տնտեսական գործառնությունները ֆինանսական հաշվետվություններում, բացառությամբ դրամական միջոցների շարժը ներկայացնող հաշվետվության, ներկայացվել են հաշվեգրման սկզբունքի հիման վրա:

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս Ընկերության կողմից պահանվել են անընդհատության, ներկայացման հետևողականության, էականության և համադրելի տեղեկատվության սկզբունքները:

Ֆինանսական հաշվետվությունների արժեքների ներկայացման արժույթ է համարվում Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը՝ Դրամը: Արժեքների թվաբանական մեծությունները ներկայացվել են հազար դրամներով: Արտարժույթով ներկայացված ակտիվները և պարտավորությունները հաշվետու ամսաթվի դրությամբ վերագնահատվել են՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային փոխարժեքները:

### **Ծանոթագրություն 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ**

Ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմք հանդիսացող Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը նույնն է, ինչ նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համար կազմված ֆինանսական հաշվետվությունների համար կիրառված քաղաքականությունը:

### **Ծանոթագրություն 4. Հաշվապահական հաշվառման նշանակալի դատողություններ, գնահատականներ և դատողություններ**

Հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ընկերության ղեկավարությունը կատարել է ակտիվների, պարտավորությունների, եկամուտների, ծախսերի, հաշվապահական հաշվառման քաղաքականության մոտեցումների մի շարք գնահատումներ և դատողություններ, որոնք պարբերաբար վերանայվում են: Գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են փոփոխման ժամանակաշրջանում և յուրաքանչյուր հաջորդ ժամանակաշրջանում, որի վրա նշված փոփոխություններն ազդում են:

### **Ծանոթագրություն 5. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփում**

Ֆինանսական հաշվետվությունները կազմելիս կիրառվել են ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հետևողականորեն պահպանվել են հաշվապահական հաշվառման բոլոր կետերը:

#### ***ա. Եկամտի և ծախսերի հիմնական տեսակների ճանաչումը***

Ընկերության եկամուտները և ծախսերը հաշվառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացվել են հաշվեգրման սկզբունքով: Ընդ որում պահպանվել է եկամուտների և ծախսերի ճանաչման համապատասխանությունը: Մասնավորապես, ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց հասույթի և այդ ծառայությունների մատուցման համար իրականացված ծախսումների հաշվեգրումը կատարվել են միաժամանակ այն ժամանակաշրջանի ընթացքում, որին դրանք վերաբերվում են:

#### **Ապահովագրական պայմանագրեր, դրանցից բխող եկամուտներ և ծախսեր**

Ապահովագրական պայմանագիրը պայմանագիր է, համաձայն որի կողմերից մեկը (ապահովագրողը) իր վրա է վերցնում պայմանագրի մյուս կողմի (ապահովադրի) նշանակալի ապահովագրական ռիսկը՝ համաձայնվելով հատուցել ապահովադրին, եթե պայմանագրով սահմանված դեպքը (ապահովագրական պատահար) բացասաբար ազդի ապահովադրի վրա:

Ընկերությունը իր հիմնական գործունեությունից ստացված եկամտի հիմնավորող փաստաթուղթ է համարում թողարկված ապահովագրական վկայագիրը: Ընդ որում, վկայագրերի թողարկման և եկամուտների ճանաչման ամսաթիվ է համարվում հետևյալ երկու ամսաթվերի՝ վկայագրերի թողարկման (վավերացման) և վկայագրերի գործողության սկզբի ամսաթվերից առավելագույնը: Ապահովագրական վկայագրերի հետագա փոփոխությունները իրականացվում են ապահովագրական վկայագրերի անբաժանելի մաս կազմող համաձայնագրերի թողարկումով, որոնց գծով առաջացող եկամուտները և ծախսերը նույնպես ճանաչվում են համաձայնագրերի թողարկման (վավերացման) և համաձայնագրերի գործողության մեջ մտնելու ամսաթվերից առավելագույնով:

Վերապահովագրության գծով ծախսերը ընկերության կողմից հաշվեգրվում են ապահովագրական վկայագրերի թողարկման հետ գուգահետ: Ոչ ռեզիդենտ վերապահովագրողին հաշվեգրված վերապահովագրավճարների գծով բյուջեի նկատմամբ առաջացող պարտավորությունները Ընկերության կողմից ճանաչվում են միայն դրանց փաստացի փոխանցման ժամանակ:

Համախառն ապահովագրավճարներից հաշվեգրված եկամուտը Ընկերությունը ճշգրտում է չվաստակած ապահովագրավճարների մասով, որը նախատեսվում է վաստակել հաջորդ կամ հետագա ֆինանսական ժամանակաշրջանում՝ ձևավորելով *Չվաստակած ապահովագրավճարների պահուստ*, որը հաշվարկվում է առանձին յուրաքանչյուր ապահովագրական պայմանագրի համար, կիրառելով օրական համամասնական մեթոդը, անհրաժեշտության դեպքում ճշգրտվում է՝ պայմանագրի գործողության ժամկետում ռիսկի աստիճանի փոփոխություններն արտացոլելու համար:

#### **Ապահովագրական հայտեր**

Հայտերի հետ կապված ծախսերը ներառում են կարգավորված և չկարգավորված հայտերի կարգավորման ծախսերը, որոնք առաջացել են տվյալ ֆինանսական ժամանակաշրջանում տեղի ունեցած դեպքերից՝ նախորդ ժամանակաշրջանի հայտերի պահուստի ճշգրտումների հետ միասին:

Հաշվետու ժամանակաշրջանում չկարգավորված հայտերի գծով Ընկերությունը ձևավորում է Ներկայացված, սակայն չվճարված պահանջների պահուստ (ՆՊՊ), ինչպես նաև Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստ (ՏՊՊ)՝ համաձայն ՀՀ ԿԲ կողմից և Ընկերությունում ընդունված ներքին իրավական ակտերի և կանոնակարգերի:

## **Ձեռքբերման ծախսեր**

Ապահովագրական պայմանագրերի ձեռքբերման հետ կապված ծախսերը կապիտալացվում են և ամորտիզացվում դրանց համախառնասխան պայմանագրի գործողությանը զուգընթաց: Ձեռքբերման ծախսերը ներառում են այնպիսի ծախսեր, ինչպիսիք են միջնորդավճարները և նախնական գնման հետ կապված ծախսերը:

### ***բ. Արտարժույթային փոխարժեքային տարբերությունների ճանաչման մոտեցումը***

Արտարժույթով գործարքը սկզբնական ճանաչման պահին գրանցվում է ՀՀ դրամով արտարժույթի նկատմամբ կիրառելով ՀՀ դրամի և արտարժույթի միջև ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում գործարքի օրը հրապարակված հաշվարկային փոխարժեքով:

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին՝

1) արտարժույթով դրամային հոդվածները ներկայացվել են՝ կիրառելով փակման փոխարժեքը,

2) արտարժույթով սահմանված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են ՀՀ դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում, կամ, երբ Ընկերության դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են եկամուտ կամ ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Դրամային հոդվածների վերագնահատումը ՀՀ ԿԲ պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված հաշվարկային միջին փոխարժեքով կատարվում է յուրաքանչյուր անգամ ԿԲ-ի կողմից արտարժույթների հաշվարկային փոխարժեքները հրապարակելիս:

2016թ.-ի հունիսի 30-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների կազմման համար օգտագործվել են ՀՀ ԿԲ ինտերնետային կայքում հրապարակված հետևյալ հաշվարկային փոխարժեքները՝

1 ԱՄՆ Դոլլար	476,68	ՀՀ Դրամ,
1 Եվրո	530,45	ՀՀ Դրամ,
1 Ռուսական Ռուբլի	7,44	ՀՀ Դրամ:

### ***գ. Հարկեր (ընթացիկ և հետաձգված)***

Շահույթի գծով տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ կլինեն հաշվեկշռի ամսաթվի դրությամբ և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ապագա ժամանակաշրջաններում բյուջե վճարման (բյուջեից փոխհատուցման) ենթակա շահութահարկի գումարն է՝ կապված՝

ա) ժամանակավոր տարբերությունների, որը իրենից ներկայացնում է ակտիվի (պարտավորության) հաշվեկշռային և հարկային արժեքների տարբերությունը, կամ

բ) չօգտագործված հարկային վնասը և (կամ) գեղչերը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Հետաձգված հարկային պարտավորություն ճանաչվել է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է ապագա ժամանակաշրջաններում հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները կամ հարկային վնասը:

### ***դ. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ***

Ընկերության կողմից դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ դրամական միջոցները, ՀՀ ռեզիդենտ և օտարերկրյա բանկերում ներդրված դրամական միջոցները:

### ***զ. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ***

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը:

Գործող վարձակալված ակտիվները Ընկերության կողմից արտահաշվեկշռում ցույց են տրված իրական արժեքով, իսկ հաշվետու ժամանակաշրջանի գծով վարձակալության ծախսերը հաշվեկշռվել են:

Մաշվածությունը ճանաչվել է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման և շահագործման հանձման ամսաթվից: Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ ներդրումների մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում: Օգտակար ծառայության սահմանված ժամկետները հետևյալն են՝

- տնտեսական գույքի համար – 1-7 տարի,
- համակարգչային սարքավորումների համար – 3 տարի,
- տրանսպորտային միջոցների համար – 3-10 տարի,
- այլ հիմնական միջոցների համար – 1-10 տարի:

Մինչև 50,000 (հիսուն հազար) ՀՀ Դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Հետագա ծախսումները, որոնք վերաբերվել են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացվել են ակտիվի հաշվեկշռի արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ կլինեն, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Մյուս բոլոր հետագա ծախսումները ճանաչվել են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախսեր:

Ընկերության կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են ձեռք բերման արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Ընկերությունը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի:

**Է. Ֆինանսական գործիքներ**

Ֆինանսական գործիքները ճանաչվում են հաշվեկշռում, երբ Ընկերությունը դառնում է տվյալ ֆինանսական գործիքի առնչությամբ կնքված պայմանագրի կողմ: Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, եթե ֆինանսական ակտիվներից առաջացած դրամական հոսքերի նկատմամբ Ընկերության պայմանագրային իրավունքների ժամկետն ավարտվում է կամ, եթե Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվները այլ անձանց՝ չպահպանելով դրանց նկատմամբ վերահսկողությունը կամ ակտիվների հետ կապված բոլոր նշանակալի ռիսկերը և արտոնությունները: Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, եթե պայմանագրով սահմանված Ընկերության պարտավորությունների ժամկետն ավարտվում է կամ այդ պարտավորությունները մարվում են կամ չեղյալ են համարվում:

Ընկերության կողմից տնօրինվող ֆինանսական գործիքներն ճանաչվում են սկզբնական արժեքով, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների, որոնք չափվում են իրական արժեքով:

Ընկերության կողմից տնօրինող ֆինանսական գործիքներն ընդգրկում են ներդրումները բաժնային և պարտքային արժեթղթերում, ապահովագրության գծով և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրական գծով և այլ կրեդիտորական պարտքերը, այլ պարտավորությունները:

Սկզբնական չափումից հետո իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գծով օգուտը կամ վնասը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Այլ ֆինանսական ակտիվները, ինչպիսիք են Դրամական միջոցները և դրանց համարժեքները, ապահովագրության գծով և այլ դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով՝ էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած ցանկացած արժեզրկումից կորուստ:

**Մանրագրություն 6. Զուտ ապահովագրավճարներ**

***Համախառն ապահովագրավճար***

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- դժբախտ պատահարներից ապահովագրություն	30,533	22,863
- առողջության ապահովագրություն	98,596	159,188
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	113,132	90,334
- փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	24,872	5,166
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	99,877	62,407
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	3,053	1,613
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	3,674	1,657
- աջակցության ապահովագրություն	11,577	6,980
- ֆինանսական վնասների ապահովագրություն	-	-
- ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	1,075,741	974,349
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն (Վերաապահովագրություն)	148	206
<b>Ընդամենը</b>	<b>1,461,203</b>	<b>1,324,763</b>

**Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճար**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- դժբախտ պատահարներից ապահովագրություն	(1,340)	(118)
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(32,622)	(25,844)
- փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(1,157)	(649)
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	(17,887)	(19,210)
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(784)	(1,395)
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(1,358)	(939)
- Ֆինանսական վնասների ապահովագրություն	-	-
<b>Ընդամենը</b>	<b>(55,148)</b>	<b>(48,155)</b>

**Ծանոթագրություն 7. Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն (հաշվի առած վերաապահովագրողի բաժնի նվազեցումները)**

**Չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- դժբախտ պատահարներից ապահովագրություն	1,886	18,397
- առողջության ապահովագրություն	(19,318)	(104,807)
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	22,419	12,869
- փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(6,783)	(490)
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	(13,623)	5,362
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(2,470)	1,519
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	4,530	1,053
- ֆինանսական վնասների ապահովագրություն	11,258	10,712
- աջակցության ապահովագրություն	189	566
- ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	(93,488)	(67,845)
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն (Վերաապահովագրություն)	(226)	(54)
<b>Ընդամենը</b>	<b>(95,626)</b>	<b>(122,718)</b>

**Վերաապահովագրողների բաժինը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխություն**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- դժբախտ պատահարներից ապահովագրություն	723	107
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	3,761	(3,785)
- փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	355	34
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	(6,115)	1,466
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(305)	(92)
- ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	(648)	(760)
- ֆինանսական վնասների ապահովագրություն	(9,422)	(8,316)
<b>Ընդամենը</b>	<b>(11,651)</b>	<b>(11,346)</b>

**Օանդագրություն 8. Զուտ հատուցումներ**

***Համախառն հատուցումներ***

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն	(1,002)	(610)
- առողջության ապահովագրություն	(36,973)	(32,664)
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	(63,083)	(66,071)
- փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	(198)	-
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	(5,284)	(1,656)
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	-	(125)
- աջակցության ապահովագրություն	(3,074)	(2,069)
- ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն ԱՊՊԱ	(441,692)	(451,279)
- <i>Հատուցումների կարգավորման ծախսեր</i>	(24,742)	(22,951)
<b>Ընդամենը</b>	<b>(576,048)</b>	<b>(577,425)</b>

***Վերաապահովագրողներից ստացված հատուցումներ***

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	20,894	20,185
- հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	48	-
- գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	(119)	119
<b>Ընդամենը</b>	<b>20,823</b>	<b>20,304</b>

**Օանդագրություն 9. Ապահովագրության պայմանագրերի պահուստների փոփոխություն (հաշվի առած վերաապահովագրողի բաժնի նվազեցումները)**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Տեղի ունեցած, բայց չներկայացած պահանջների պահուստի փոփոխություն	23,708	(11,910)
- Ներկայացված, սակայն դեռ չմարած պահանջների պահուստի փոփոխություն	7,317	69,459
- Պահանջների պահուստներում վերաապահովագրողների բաժնի փոփոխություն	1,104	237
<b>Ընդամենը</b>	<b>32,129</b>	<b>57,786</b>

**Օանդագրություն 10. Ձեռքբերման ծախսեր**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Կասկո	(54,816)	(8,421)
- ԱՊՊԱ	(141,869)	(121,686)
- Բժշկական ապահովագրություն	(12,616)	(7,858)
- Գույքային ապահովագրություն	(14,610)	(8,396)
- Այլ	(21,600)	(7,295)
<b>Ընդամենը</b>	<b>(245,511)</b>	<b>(153,656)</b>

**Ծանոթագրություն 11. Այլ ծախսեր ապահովագրության գծով**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Կասկո	(2,272)	(2,968)
- ԱՊՊԱ	(140,717)	(119,802)
- Բժշկական ապահովագրություն	(241)	(3,415)
- Գույքային ապահովագրություն	-	-
- Այլ	(1,828)	(122)
<b>Ընդամենը</b>	<b>(145,058)</b>	<b>(126,307)</b>

**Ծանոթագրություն 12. Այլ ներդրումային եկամուտ**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից եկամուտ	(549)	(490)
- Եկամուտներ շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից	25,180	(3,679)
<b>Ընդամենը</b>	<b>24,631</b>	<b>(4,169)</b>

**Ծանոթագրություն 13. Վարչական ծախսեր**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Ծախսեր անձնակազմի գծով	(182,920)	(161,235)
- Վարձակալության ծախսեր	(6,759)	(55,654)
- Հիմնական միջոցների ամորտիզացիոն ծախսեր	(19,170)	(30,428)
- Ծրագրի սպասարկման և պահմանման գծով ծախսեր	(11,760)	(10,140)
- Հիմնական միջոցների սպասարկման ծախսեր	(4,724)	(5,435)
- Հասարակական կապերի գծով ծախսեր	(6,039)	(4,611)
- Կապի և հաղորդակցության միջոցների ծախսեր	(7,190)	(4,851)
- Աուդիտի և այլ խորհրդատվական ծառայությունների գծով	(12,720)	(10,200)
- Տրանսպորտի և գործուղման ծախսեր	(3,177)	-
- Անդամավճարներ	(3,439)	-
- Գրասենյակային ծախսեր	(4,120)	(3,317)
- Տույժեր և տուգանքներ	(3,185)	(4,994)
- Կոմունալ ծախսեր	(2,754)	-
- Այլ վարչական ծախսեր	(15,665)	(7,786)
<b>Ընդամենը</b>	<b>(283,622)</b>	<b>(298,651)</b>

**Ծանոթագրություն 14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Ընկերության դրամական միջոցները տեխաբաշխված են ՀՀ ռեզիդենտ բանկերում և կազմում են`

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Կանխիկ դրամ դրամարկղում	53	53
- Դրամական միջոցներ ճանապարհին	-	-
- Բանկային հաշիվներ ռեզիդենտ բանկերում	27,168	28,422
<b>Ընդամենը</b>	<b>27,221</b>	<b>28,475</b>

**Ծանոթագրություն 15. Բանկերում տեղաբաշխված միջոցներ**

2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները կազմել են **1,917,475** հազար ՀՀ դրամի չափով (2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **1,940,374** հազար ՀՀ դրամ) կազմում են ժամկետային ավանդներ ԲԲ+ և ցածր վարկանիշ ունեցող բանկերում:

*Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացումները*

2016 թ.-ի հունիսի 30-ի և 2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերում տեղաբաշխված միջոցները, որոնք անհատապես կազմում են բանկերում տեղաբաշխված միջոցների ավելի քան 10%, հետևյալն են՝

*Բանկերում տեղաբաշխված միջոցների կենտրոնացումներ*

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Առեկսիմբանկ – Գազպրոմբանկի խումբ	280,214	280,368
- Յունիբանկ	255,876	282,849
- Արդշինբանկ	262,325	243,318
- Հայեկոնոմբանկ	278,610	278,730
- ՎՏԲ-Հայաստան Բանկ	235,867	261,092
- ՊրոԿրեդիտ Բանկը	-	288,682
- Ինեկոբանկ	241,593	-
<b>Ընդամենը</b>	<b>1,554,484</b>	<b>1,635,039</b>

2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ փոխկապակցված անձանց հետ բանկերում տեղաբաշխված միջոցների մնացորդները ներառում են 255,876 հազար ՀՀ դրամ (2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 282,849 հազար ՀՀ դրամ):

**Ծանոթագրություն 16. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ**

2016 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները՝ **411,741** հազար ՀՀ դրամի չափով (2015 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ **386,664**) ներկայացնում են ՀՀ պետական գանձապետական պարտատուներ: Ըստ միջազգային վարկանիշային գործակալությունների նրանց վարկանիշը գնահատվում է «ԲԲ+ և ցածր»:

**Ծանոթագրություն 17. Տրված փոխառություններ, վարկեր**

Ընկերության կողմից տրամադրված փոխառություններն ու վարկերը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Տրամադրված փոխառություններ	28,916	24,922
- Փոխառությունների գծով պահուստ	(359)	(1,701)
<b>Ընդամենը</b>	<b>28,557</b>	<b>23,221</b>

**Ծանոթագրություն 18. Ապահովագրության և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ապահովագրության գծով ստացվելիք գումարները կազմում են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Ստացվելիք գումարներ ռեզիդենտ ապահովագրորդներից	863,015	855,587
- Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներից	313,574	335,084
- Կանխավճարներ բժշկական կազմակերպություններին	11,387	-
- Վերաապահովագրության պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	97,283	2,314
- Կանխավճարներ հատուցումների գծով	7,329	27,556
- Կանխավճարներ միջնորդավճարների գծով	705	-
- Ուղղակի ապահովագրության և համաապահովագրության գծով ստացվելիք գումարների հնարավոր կորուստների պահուստ	(825,843)	(801,625)
<b>Ընդամենը</b>	<b>467,450</b>	<b>418,916</b>



**Ծանոթագրություն 19. Վերաապահովագրության բաժինը ապահովագրության պայմանագրերի պահուստում:**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ապահովագրության պայմանագրերի պահուստում վերաապահովագրության բաժինը կազմում են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Վերաապահովագրողի բաժինը ՉԱՊ	49,009	60,663
- Վերաապահովագրողի բաժինը ՆՉՊՊ	4,578	3,473
<b>Ընդամենը</b>	<b>53,587</b>	<b>64,136</b>

**Ծանոթագրություն 20. Հետաձգված ձեռքբերման ծախսումներ**

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Հետաձգված ծախսեր գործակալական միջնորդավճարների գծով	157,775	143,112
- Ապագա ժամանակաշրջանի այլ ծախսեր	100,334	133,106
<b>Ընդամենը</b>	<b>258,109</b>	<b>276,218</b>

**Ծանոթագրություն 21. Այլ ակտիվներ**

Ընկերության այլ ակտիվները հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Կանխավճարվեր աշխատակիցներին	13,128	14,933
- Կանխավճարներ մատակարարներին	27,746	8,525
- Կանխավճարներ հատուցումների գծով	-	12,401
- Կանխավճարներ հարկերի գծով	4,214	9,816
- Այլ ստացվելիք գումարներ	8,681	7,442
- Այլ ակտիվներ գծով պահուստ	(102)	-
<b>Ընդամենը</b>	<b>53,667</b>	<b>53,117</b>

**Ծանոթագրություն 22. Ապահովագրության պայմանագրերի պահուստներ**

Ընկերության Պահանջների (վնասների) պահուստի մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Չվաստակած ապահովագրավճարների պահուստ	1,141,429	1,045,801
- Տեղի ունեցած, սակայն դեռևս չներկայացված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	45,761	69,469
- Ներկայացված, սակայն դեռևս չվճարված պահանջների պահուստ ռեզիդենտների գծով	135,407	142,830
<b>Ընդամենը</b>	<b>1,322,597</b>	<b>1,258,101</b>

**Ծանոթագրություն 23. Ապահովագրության և վերաապահովագրության գծով վճարվելիք գումարներ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը ունի ապահովագրության գծով վճարվելիք հետևյալ գումարները՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Որպես կանխավճար ստացված ապահովագրավճարներ	42,615	141,675
- Ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարներ	11,699	26,223
- Ռեզիդենտ ապահովադիրներին վճարվելիք հատուցումներ	12,252	12,572
- Ոչ ռեզիդենտ ապահովագրական միջնորդներին վճարվելիք գումարներ	9,504	13,144
- Ապահովագրության գծով վճարվելիք և փոխանցվելիք այլ գումարներ	7,398	7,419
<b>Ընդամենը</b>	<b>83,468</b>	<b>201,033</b>

**Ծանոթագրություն 24. Այլ պարտավորություններ**

Հաշվետու ամսաթվի դրությամբ Հնկերությունը ունի հետևյալ այլ վճարվելիք գումարները՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Հիմնական և պայմանագրային աշխատողներին վճարվելիք աշխատավարձ	90,295	58,040
- Արտաքին կրեդիտորական պարտքեր ռեզիդենտների նկատմամբ	43,367	26,488
- Կրեդիտորական պարտքեր հարկերի և տուրքերի գծով	9,045	16,462
- Վճարվելիք շահութահարկ	-	-
- Վճարվելիք արտոնյալ շահաբաժիններ	113,336	41,940
- Կրեդիտորական պարտավորություններ Բյուրոյի նկատմամբ	7,095	7,524
- Այլ ընթացիկ պահուստներ	151	-
<b>Ընդամենը</b>	<b>263,289</b>	<b>157,607</b>

**Ծանոթագրություն 25. Ստացված փոխառություններ և վարկեր**

Հնկերության կողմից ստացված փոխառություններն ու վարկերը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմում են՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Ստորադաս փոխառություններ	476,680	483,750
- Կուտակված տոկոսագումար	11,214	28,481
<b>Ընդամենը</b>	<b>487,894</b>	<b>512,231</b>

**Ծանոթագրություն 26. Բաժնետիրական կապիտալ**

Բաժնետիրական կապիտալը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմված է՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Սովորական բաժնետոմսեր	1,764,000	1,764,000
- Արտոնյալ բաժնետոմսեր	586,000	586,000
<b>Ընդամենը</b>	<b>2,350,000</b>	<b>2,350,000</b>

**Ծանոթագրություն 27. Զբաղիված շահույթ (վնաս)**

Զբաղիված շահույթի (վնասի) մեծությունը հաշվետու ամսաթվի դրությամբ կազմել է՝

	Հաշվետու ժամանակաշրջան	Նախորդ հաշվետու ժամանակաշրջան
- Ընթացիկ տարվա	202,020	(16,499)
- Նախորդ տարվա	(937,804)	(921,305)
- Հաշվարկված դիվիդենտ	(71,400)	-
<b>Ընդամենը</b>	<b>(807,184)</b>	<b>(937,804)</b>